

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային, Գրական եւ Քաղաքական

ԽՐԲԱԳԻՐ — ՏՆՕՐԷՆ

ԲԻԻԶԱՆԴ Մ. ՊՕԶԱՃԵԱՆ

Գ. Շրջան

1900 Ապրիլ 8

Թիւ 90 — ԺԵ

هنا را كيدا ق غز ه تسي

HANRAKIDAGUE

Journal Arménien Encyclopédique

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան Պոլսոյ համար	50 Դր.
Գաւառաց համար	60 ,
Արասահման	15 Զր.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց
Զատիկը (Քերթուած)
Տես՝ եւ գործ. Մանկավարժութիւն
Երկրագործութիւն
Իսկալին հասած (Վիպակ)
Ամուսնալոյծն՝ ապերջանիկ
Իմաստասիրութիւն
Գաւառական նախապաշարումներ
Քիչ մը ծիծաղ

Բ. Պ.
Յ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ
Մ.
Բ. Պ.
Ս. ԲԱՐԵԼԵԱՆ

ԹԱՓԱՌԻԿ
ՎԱՀԱՆ
Ս.

40 փարա 40

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ կը ծախուի. 1. Գաւառացի, Արմեն ԷՖ. Զպուգնեանի Դեղարանը. — 2. Սա-
մաքիա, Կայարանին մօտ, ծխավաճառ Յարութիւն Աղա Էժէսէրհանեանի խանութը. — 3. Կա-
մուրջի գլուխը, ջրավաճառ Նեան աղա Օզունեանի եղբայր (նախկին ջրավաճառ Պօղոս ա-
ղայի խանութը). — 4. Զրավաճառ Սեփան աղայի խանութը. — 5. Մարգարեան, Պալեկ, Պալեկ,
Աւենեան եւ Զարգարեան գրատուններ. — 6. Բոլոր լրագրավաճառներուն եղբայր:
Գաւառներէ ո՛վ որ կը փափաքի ՀԱՆՐԱԳԻՏԱԿի գործակալութիւնն ստանձնել, կրնայ
ուղղակի Տնօրէնութեանս դիմել:

ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՅՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Էսկի Զապիէ հասցեսի Թիւ 61

1900



Է Ք Ի Թ Ա Պ Լ

(ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ)

ԱՇԽԱՐՀԻՍ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏ ԵՒ ԱՄԵՆԷՆ ՀՁՕՐ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ԵՐԱՇԵԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ՄԵԿ ՄԻԼԻԱՌ 451 ՄԻԼԻՈՆ ՊՐԱՆՔ

1898ին՝ Է.Ք.Ի.Թ.Ա.Պ.Լ. իր ապահովագրեալներուն բաժնած է աւելի քան 15³/₄ ՄԻԼԻՈՆ Փրանք շահաբաժին

[Այսինքն նոյն տարւոյ մէջ Փրանսական ՄԻԱՅԵԱԼ 17 ընկերութեանց բաժնած շահերու համագումարին գրեթէ կրկնը]:

Ախարհիս մէջ գտնուող ոչ մէկ ընկերութիւն

Է.Ք.Ի.Թ.Ա.Պ.Լ. չափ գործառնութիւն ունի

Է.Ք.Ի.Թ.Ա.Պ.Լ. չափ պահեստի դրամ ունի

Է.Ք.Ի.Թ.Ա.Պ.Լ. չափ շահաբաժին կը վճարէ

Հետեւաբար՝ ոչ մէկ ընկերութիւն կրնայ աւելի ԱՅ.Ա.Ն. Եւ աւելի ՇԱՀԱԻՏ ԸՆԹԱՅԻԼ կեանքի ապահովագրութիւնը՝ որքան Է.Ք.Ի.Թ.Ա.Պ.Լ.:

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՍԵՂԱՆԱՌՔ

ԼճԱՌՆ

Անգղիոյ պանքս Բարիզ Եւ Կ. Պոլիս, Գրեաթ Լիոնէ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉ ԹՈՒՐԻՒՅԻՑ

ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ

Կ. Պոլիս, Պաշտէ Գաբու, Անանիատի Խան

Պատկերազարդ Աշխարհագրութիւն

ՊՕԶԱԺԵԱՆ

Դիւն 4 դրու

Լոյս տեսաւ Ն. Պեպկեան մալուր սպագրութեամբ, քաղ. վերջին փոփոխութեանց եւ Կրթական ծագրին համաձայն: Մայրաքաղաքս Է՛ն կարեւոր դպրոցներն անմիջապէս ընդունեցին զայն իրենց դասագրոց ցանկին մէջ:

Փնտեցեմք 1900ի սպագրութեամբ, որ 208 էջերէ կը բաղկանայ, եւ իր պարունակած պատմական, գիտական, առեւտրական եւ ցեղային ծանօթութիւններով, աշխարհագրութեան Ա. դասագիրքը կը հանդիսանայ եւ արժանի է ամեն ուսուցչի ուսագրութեան:

Հանրագիտակի Տնօրէնութիւնը կը հայրայթէ մեծաքանակ 30. առ 100 գեղջով:

ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑ ԴԵՂՕՐԷԻՑ

Կրէկուառ Ղազարօծ եւ Ընկ.

Պատիւ ունինք ծանուցանել թէ վաճառատունս փոխադրուած է Սասըգի Խան քիւ 1 եւ 2: Եւրոպիոյ բոլոր կեդրոններուն հետ իր ունեցած յարաբերութեանց շնորհիւ, քաւմ դեղերու անհուն պէտքերուն համար մը միտք պատրաստ ունի մեծաքանակ, ինչպէս նաեւ տիպեալական համալի վայելող եւրոպացի բժիշկներու մասնագիտական պատրաստ դեղերը ու ամեն տեսակ հանգանակները: Գաւառներէ եղած յանձնարարութիւնք ճշդիւ ու փութով կը կատարուին, անմեղելի կերպիւ ածան գներով:

Դիմեցեմք եւ պիտի համոզուիք:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային, Գրական եւ Քաղաքական

ԽՄԲԱԳԻՐ - ՏԵՕՐԷՆ

ԲԻԻԶԱՆԴ Մ. ՊՕԶԱՃԵԱՆ

Գ. Շրջան

1900 Ապրիլ 8

Թիւ 90 — ԺԵ



ՓՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՆԻ Ի ՄԵՌԵԼՈՑ



Չ Մէկ աւետեաց ձայն ա՛յնչափ հզօր ու ա՛յնչափ քաղցր չէ հնչած որչափ սա բառերը. «Փրիստոս յարեա՛ւ ի մեռելոց» այսպէս կը գրէր մեծ, լիահաւատ, սիրուած Հայ մը, սիրուած իր գրչով, սիրուած իր սրտով, սիրուած իր հոգւով, երբ օտարութեան մէջէն, ի հեռուստ, չմոռցաւ իր գողտր Զատիկն ուղղել Հայերուն, իբրեւ վերջին յաւերժական հրիտակ մը այն քրիստոնէական վառ հաւատքին, որ հին Հայերուն յատկանիշն էր երբեմն։ Ո՛ր այս հաւատք հիմա։ Ո՛վ չէ կարգացած այդ մեծ Հայուն անմահ տողերը, ուր վառ գոյներով ուրուադծուած է Հայուն քրիստոնէական

ական մեծ հաւատքը, եւ ո՛վ «ախ» մը չարձակեր ի յուշ այն երջանիկ օրերուն, ուր Հայն ինքզինք երջանիկ կ'զգար, վասն զի ինքզինք մեծ մարդերով շրջապատուած կ'զգար դժբախտութեան որպէս եւ ուրախութեան մեծ օրերուն մէջ։ Հիմա Հայութիւնը իր քրիստոնէական հաւատքին մէջ քայքայուած մեծ ընտանիքի մը կերպարանքն առած է. այլեւս Աստուծոյ կերքը չէ՛ որ կը կրէ իր սըրտին մէջ, այլ Աշխարհի կերքն ու շահն ընդգրկած է, այլեւս ընդհանուր եզրայրսիրութիւնը չէ որ կ'ոգեւորէ զինքը, այլ խեռն ու առեւտրութիւնը։

Փրիստոս յարեա՛ւ ի մեռելոց, կը գոչենք իրարու։ Փրիստոսի յարութիւնը մարդկային ընկերութեան վերանորոգումն է, բայց ի՛նչ օգուտ ունի այդ յարութիւն մեզ համար, երբ տախառ տախառ կը մահանանք... հաւատքով։ Ո՛հ, չխաբուի՛նք տօնական օրերու մէջ

տեսնուած վաղանցիկ բարեպաշտութեանէն, որ կեղծ ջնարակի մը պէս պիտի թափի մեր վրայէն, երբ անցնին տօները, զմեզ պահ մը ոգեւորելէ ետք: Եւ մենք հոս, այս մեծ մայրաքաղաքին մէջ, է՛ն մեծէն մինչեւ է՛ն փոքրը, մեր անձնական վայելքով զբաղած ենք, իբր թէ Զատիկը վայելքի հոմանիշ եղած ըլլար: Ո՛ր է հին հաւատքը մեր հայրերուն ու պապերուն որք ասանկ բարեպաշտիկ զուարթ օրերու մէջ նախ աղքատին ու տնանկին կ'ողորմէին, եւ ապա կը տօնէին Զատիկը: Նպաստից Սընտուկը դրամ չկայ, կը գոչէ, եւ այս աղիողորմ աղաղակին առջեւ անտարբերութիւնը միայն կը տնկուի լուիկ: Սա զատկական տօնին առթիւ, եթէ հարիւր հազար հայերս քառսունական փարանուիրէինք, սա՛նկ հազար ոսկի մը կըրնայինք ստեղծել որ գաւառացի կարօտելոց համար նախախնամական բան մը պիտի ըլլար Նպաստից Յանձնաժողովին ձեռքը, որ իր կենդանութիւնը քիչ շատ կը պահէ դեռ Պատրիարքարանի չրջանակին մէջ: Անհատական բարերարութիւնք սահման մ'ունին, որոյ պակասը պէտք է ընու ժողովրդային բարերարութիւնը: Զատիկը պատեհ առիթ մը չընծայեր քահանայից դասուն, — քանի որ տարին ի բուն իրենց է՛ն մոռցուած ծովն ալ յիշելու բարեսրտութիւնը կ'ունենան, — տուներէն մասնաւոր հանգանակութիւն մ'ընելու ընդհ. գաւառացի կարօտելոց համար:

* * *

Աղդ. Պատրիարքարանը, կրնանք ըսել, բովանդակ Աւագ շաբթուան մէջ նոյնքան գթօտ նուիրատուներու այցելութիւնը չընդունեց որքան փութկոտ թաղականներու, որք եկեղեցւոյ... Նիւթական պայծառութեան հոգէն հալումաշ, քարոզիչ, քարոզիչ կը մուրային: Կարելի՞ բան է որ այսպիսի անուամ օրե-

րու մէջ, եկեղեցական արարողութիւնք կատարուին առանց փայլուն ու պերճաբան քարոզչի մը նախագահութեան: Հա՛րկ է ըսել թէ այդ փութկոտ թաղականներուն հոգն ո՛չ այնքան հոգիներ փրկել, Քրիստոսի հրաշափառ յարութեան տօնին առթիւ անհաւատներն եկեղեցւոյ ծոցն հրաւիրել է, որքան նիւթական շահուն անձուկը, որ իրենց ամէն հնարամտութեան առարկան եղած է հիմա: Փայլուն փակեղով վարդապետին կամ եպիսկոպոսին ձեռքը տալ ոչ նուազ փայլուն պնակը, եւ պտըտցնել աղօթող ժողովուրդին կարգերուն մէջ, այս չէ՞ իրենց բովանդակ հոգը: Եթէ ապաքէն եկեղեցին քարոզչի պէտք ունէր եւ ունի, ինչո՞ւ սարի ի բուն այդ քարոզիչը չպահեցին, ինչո՞ւ խնայեցին անոր ճղճիմ թոշակը, ու հիմա մետասանբորոգ ժամուն, — ինչպէս մեր ամէն գործերուն մէջ, — այսինչ կամ այնինչ թաղին կամ գիւղին քարոզիչը չորթեղու կ'ելնեն: Ի՛նչ փութկոտութիւն, Աստուած իմ, մինչեւ իսկ հեռագիրներ կը տեղան այս կամ այն վանքը, եպիսկոպոսներ, վարդապետներ կը հրաւիրուին, իբր թէ այն տեղի ժողովուրդը պէտք չունենար քարոզութեան, եւ իբր թէ արարողութիւն մը չկարենար կատարուիլ առանց վարդապետի մասնակցութեան: Բայց ինչո՞ւ այսքան եռանդուն փութկոտութիւն ցոյց չտրուեցաւ ու չի տրուիր նոյն այն պերճախօս քարոզիչները վազցնելու հո՛ն ուր ժողովուրդը եկեղեցւոյ ծոցէն խումբ խումբ կը քաշէին ու կը տանէին այսօր բօբեր, վաղը նոր աղխարհի առաքեալներ, ուրիշ օր մ'ալ բազերաներ:

Միւս կողմէ ո՞ր էին այդ պերճաբան համարուած քարոզիչները, որք ապաշխարութեան բովանդակ եօթն եօթնեակներուն մէջ բողոքական քարոզիչներու թողած էին ասպարէզը, մեծ լրա-

գրի մը էջերուն մէջ փայլեցնելու իրենց աւելի կամ պակաս պերճախօս քարոզները, զորս ամէնէն անհաւատներն իսկ կարդալու կը փորձուէին: Ո՞ր պերճաբան քարոզիչն իր խնամով պատրաստած մէկ քարոզն համարձակեցաւ հրապարակ հանել քողոքական քարոզչին գէմ: Ու այսքան ջնարակեալ ձեւերու, արուեստակեալ կեղծիքներու, նիւթամոլ փութկոտութիւններու հանդէպ, ի՞նչպէս չգոչել այն մեծ մարդուն հետ, որ Հիւկոյի մահուան առթիւ մեծ մարդերու հետզհետէ պակսելուն ակնարկելով կ'ըսէր. «Արեւները տակաւ կը մարին, ու մենք դարձեալ կը մնանք փողոցի լապտերներուն լուսովը»: Բ. Պ.

ԶԱՏԻԿԸ

Երեւեմ վե՛ր, անհունութեան ճակատէն
Զուարթուն մը բեւաճէ վար հողանի,
Դերեզմանին սեւ կամարը կը սարսոյի,
Այդ լուսաւոռ սուրբ եակին ստուերէն:


Զուարթուն մը բեւաճէ վար հողանի,
Կը բաւալի, կը գլորուի փարս անդէն,
Այդ լուսաւոռ սուրբ եակին ստուերէն,
Զինք դիտողներն կ'իյնան յերկիր անհոգի:

Կը բաւալի, կը գլորուի փարս անդէն
Աստուածորդին գերեզմանէն կը կանգնի,
Զինք դիտողներն կ'իյնան յերկիր անհոգի,
Իսկ մի ֆանին կը խուսափին հեւալէն:

Աստուածորդին գերեզմանէն կը կանգնի,
Մարդկութիւնը կ'ազատի իր վիշտերէն,
Իսկ մի ֆանին կը խուսափին հեւալէն
Ու կը պատմեն յարութիւնն Բրիստոսի:

յԱսաբազար

Յ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ



ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՖԻԶԻԲԱԿԱՆ ԴԱՍՏԻՍՐԱԿՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Ա.

(Շարունակութիւն ժՁ քիւէն)

Բայց ա՛յն առողջապահական միջոցները զորո՞ւ դաստիարակն անձամբ պիտի տնօրինէ, ինքնին պիտի չբաւէին. պարտի նաեւ, իրրեւ պարտականութիւն, տղայոց վրայ հարկ դնել ինչ ինչ խնամքներ, և հսկել որ դորձադրեն զանոնք: Եւ նախ պիտի պահանջէ որ անոնք մաքուր ըլլան թէ՛ իրենց անձով եւ թէ՛ հազուատներով: Անտարակոյս չի կրնար պահանջել որ այդ հազուատներ նոր ըլլան, բայց կրնայ և պարտի պահանջել որ անմաքրութեան եւ անկարգութեան հետքեր չկրեն, լուացուած ու կարկտուած ըլլան: Գալով մարմնոյն, տղայոց ձեռքերը լուացուած, ականջները մաքրուած, զլուիւր մաքուր և մաղերը սանտրուած պէտք է ըլլան: Ստուգելու համար թէ այս զանազան պատուէրներ կատարուած են թէ ոչ, դաստիարակն ամէն առաւօտ մէն մի դաստիարակն աշակերտները պիտի քննէ, և տղաքներէն անոնք որ թերացած են իրենց այս պարտականութիւններէն մէկուն մէջ, ի հարկին պիտի հրաւիրուին տուն երթալ, անմաքրութեան հետքերը ջնջելու կամ իրենց հազուատները շտկելու համար: Բայց այս ամենն ըլլալու է զգուշացումով եւ մարտարմտութեամբ և խոհեմութեամբ, եւ խնամով զգուշանալու է վիրաւորել տղաքատութեան դիւրագգածութիւնը թէ՛ տղայոց և թէ՛ ծնողաց սրտին մէջ: Միւս կողմէ այս մաքրութեան խնամքներուն դորձադրումը ինքնին աւելի պիտի դիւրանայ ա՛յն օրինակով իսկ զոր դաստիարակն ի՛նք անձամբ պիտի տայ թէ՛ իր անձին վրայ եւ թէ՛ դպրոցին ծայրայեղ մաքրութեամբ: Տղայք այդ օրինակը պիտի տանին մինչեւ իրենց ընտանեաց ծոցը. որք անուղուկի կերպով պիտի օգտուին անկէ, և այս մաք-

րութեան ունակութիւնք տակաւ առ տակաւ բարոյական օգտակար ազդեցութիւն մը պիտի ունենան անոնց վրայ: Վասն զի մաքրութիւնը եւ նիւթական կարգաւորութիւնը մէկէ աւելի կապերով առնչութիւն ունին բարոյական կարգաւորութեան եւ հոգւոյն ամբողջութեան հետ. մին յաճախ միւսին հետեւութիւնը կամ գէթ արտաքին նշանն է, եւ ասոր համար է որ մաքրութիւնն արժանացած է կէս-առաքինութիւն մը կոչուելու:

Դաստիարակը պիտի չներէ որ իր աշակերտները դասի ժամանակ յոռի կեցուածք մը, դիրք մ'առնեն եւ պահեն, մանաւանդ գրեւոր ժամանակ. թեւերն ու սրունքները բնական դիրքի մը մէջ գտնուելու են. ուսերը միեւնոյն բարձրութեան մէջ կենալու են, երկուքն ալ, կուրծքը մանաւանդ ճշնշուելու չէ: Դաստիարակը ճշտիւ պիտի հրահէ այս կէտերուն վրայ, վասն զի վտանգ կայ աղայոց առողջութեան եւ ուժին համար: Աւելին պիտի ընէ. պիտի չմոռնայ թէ շարժականութիւնն անհրաժեշտ է անոնց, թէ դիրքի փոփոխութիւնն ու շարժումը անհրաժեշտ են անոնց ֆիզիքական բնութեան, եւ թէ նախախնամութիւնն ինքնալայսպէս կ'ուզէ, անոնց մարմնոյն դարգացումը նպաստաւորելու համար. հետեւապէս դասերը կարճատեւ եւ պէսպէս պէտք է ըլլան: Աշակերտք դասերուն պիտի հետեւին մերթ կանգուն, մերթ նստած, եւ կարգաւորեալ շարժումներ պիտի ընեն մէկէն միւսին անցնելու համար: Ասկէց զատ, երբ ժամն անգամ մը, երբ դասերն աւարտին, լաւագոյն է 10—15 վայրկեանի փոքրիկ զբօսանք մը տալ անոնց:

Պէտք է յարել թէ դաստիարակը, երբ դպրոցին մէջ ծանր արկած մը պատահի, առաջին խնամքները տալով հանդերձ, պարտի իմաց տալ տղուն ծնողաց. անոնց պիտի յանձնէ զայն, եւ կատարեալ ապաքինումէն վերջ միայն վերստին դպրոց պիտի ընդունի:

Աւասիկ ասոնք են համառօտիւ տ'յն խնամքները զորս դաստիարակն անձամբ պիտի տնօրինէ, կամ տնօրինել պիտի տայ իր աշակերտներուն. բայց հոս չի սահմանափակ-

ուիր իր գործն առողջապահական տեսակետով: Եթէ իր ուղղակի գործողութիւն չի կրնար աւելի հեռուն երթալ, իր խորհուրդներ կրնան տակաւին հետեւիլ աշակերտին՝ իր ֆիզիքական կեանքին մէջ, դպրոցէն դուրս, եւ մինչեւ իսկ իրենց ազդեցութիւնը տարածել մանկութենէն ալ անդին: Այս առողջապահական խորհուրդներ, ինչպէս դիւրահասկնալի է, պէտք չէ բնաւ որ վարդապետական ձեւ մ'առնեն, դասախօսութեանց առարկայ ըլլան. խնդիրն այսպիսի բանի մը վրայ չէ: Այդ խորհուրդներ պարզապէս պիտի տրուին տղայոց, ցորչափ դպրոցին կեանքը յառաջ բերէ զանոնք. հետեւապէս, դասարանի մէջ, դասի մը ատեն, ընթերցանութեան մը, քերականական օրինակի մը, գրի օրինակի մը, աշակերտի մը գէշ կեցուածքին առթիւ. զբօսանքի կամ շրջագայութեան ատեն, անխոհեմութեան մը, խաղի մը, անկման մը, առողջապահական գէշ օրինակի մը եւ այլն առթիւ: Այս խորհուրդներ առնելու են մերթ պատուէրի մը, մերթ պատմութեան մը ձեւը, որոյ եզրակացութիւնն իրեն մէջ պիտի ամփոփէ տրուելիք խորհուրդը: Վերջապէս, դաստիարակն ամէն պատեհ առիթէ օգուտ պիտի քաղէ իր աշակերտաց մտքին մէջ քանդակելու առողջապահական ամէն խորհուրդներն որ այնքան կարեւոր են անոնց տարիքին համար: Տղայք ալ իրենց կարգին պիտի չթերանան իրենց ընտանիքներուն մէջ տանելէ այդ խորհուրդները, որոնցմէ պիտի օգտուին եւ օգուտ քաղել պիտի տան, մանաւանդ եթէ տեսնեն որ իրական կարեւորութիւն մը կ'ընծայէ անոնց, եւ այս կերպով, բացի այն բարիքէն զոր ուղղակի պիտի ընէ անոնց, անուղղակի եւ անհաշուելի բարիք մ'ալ պիտի ընէ ընտանեաց:

Կը մնայ այժմ ներկայացնել այս խորհուրդներն ու պատուէրները. բայց ասիկա ուրիշ բան պիտի չըլլար եթէ ոչ առողջապահութեան դասախօսութիւն մը: Բայց այս չէ մեր հոս առաջադրած նպատակը: Սակայն եւ այնպէս, ուսուցիչներու դիւրութեան համար, եւ մանաւանդ անոնց ուշադրութիւնն հրաւիրելու համար ամէնէն կարեւորն կէ-

տերուն վրայ, կը փութանք կարճ ի կարճոյ ամփոփել աստ մէկ քանի կարեւոր պատուէրներ, մանկութեան մասնաւոր տեսակէտով, առողջապահութեան, բնակարաններու, հագուստներու, արտաշնչութեան եւ կերակուրներու մասին:

1. Պէտք է ստէպ նորոգել բնակարաններուն օդը, մինչեւ իսկ անոնց՝ ուր հիւանդներ կը գտնուին, բայց անհրաժեշտ զգուշութիւնները ձեռք առնելով:—Պէտք է բնակարաններու մէջ խնամով հսկել պատերու, կարասիներու եւ գոյքերու մաքրութեան վրայ:—Գիւղի մէջ բնակութիւնն աւելի առողջարար է քան դաշտերու բնակութիւնը, ինչպէս ծառուտ վայրերը, առտուան մաքուր ու զով օդը:—Պէտք է որ տղայք վարժուին կանուխ ելնելու եւ այս մաքուր ու զով օդը ծծելու:—Բնակարաններու օդին բարեխառնութիւնը պէտք է չափաւորել ամէն եղանակի մէջ:—Լոյսը մարդու առողջարար է եւ անհրաժեշտ: Երբեք օդի հետ պէտք է թափանցէ բոլոր բնակարաններուն մէջ: պէտք է որ տղայք արեւուն եւ բաց օդին մէջ երթան, ճաշածութեան եւ խոյրին առաջին առնելու եւ մորթն ու միսերը պնդացնելու համար:

2. Հագուստներու մասին, պէտք է ըզգուշանալ այն ամէն բանէ որ կրնայ նեղել անդամներուն շարժումն ու զարգացումը: այսպէս, նեղ հագուստներէն, փողկապներէն, սեղմիրաններէն եւ նեղ կօշիկներէն զգուշանալու է:—Պէտք է զգուշանալ նաեւ սեթեւեթ ու նորաճեւութիւն բուրոյ բաներէն, եւ նախամեծար համարել պարզ այլ վայելուչ հագուստները:—Թէպէտ եղանակին համեմատ այլազան, հագուստները պէտք չէ երբեք ծանր ըլլան, այլ ընդհակառակն, ընդհանրապէս թեթեւ:—Գլուխը սովորաբար բաց ըլլալու է, մանաւանդ բնակարաններու մէջ:—Ոտքերն ընդհանրապէս պատասպարուած ըլլալու են:—Անկողինը փափուկ ու կակուղ ըլլալու չէ, ոչ ալ վերմակը՝ ծանր:—Այս բոլոր միջոցներով պէտք է որ մանուկը վարժուի եւ չարքաշ դառնայ օդին ամէն խտութեանց, բայց զգուշաբար եւ աստիճանաբար: Այս չարքաշութիւն եւ յոգնեցուցիչ մարմնակր-

թանքները կը զարգացնեն ու կը կազդուրեն մարմինը եւ միանգամայն բարոյական շատ մը անպատեհութեանց առաջը կ'առնեն:

3. Արտաշնչութեան կանոնաւոր շարժումը դիւրացնելու համար, անհրաժեշտ է հսկել մարմնոյն եւ հագուստներուն մաքրութեան վրայ:—Լոգանքի կիրառութիւնն ամենամեծ կարեւորութիւն ունի արտաշնչութեան համար:—Պէտք է զգուշանալ այն ամէն բանէ որ կրնայ յանկարծ ընդմիջել արտաշնչութիւնը: Յանկարծ ցուրտէն տաք կամ մանաւանդ տաքէն ցուրտ մի' անցնիք:—Պէտք է զգուշանալ ջուր խմելէ, գլուխը բանալէ կամ անգործ ու անշարժ մնալէ բաց օդի մէջ, երբ մարդ տաքցած է:

4. Պէտք է որ տղայք վարժուին իրենց տրուած զանազան կերակուրներն ուտելու: Գալով կերակուրներու ընտրութեան, պէտք է զգուշանալ, մանաւանդ տղայոց համար, այնպիսի կերակուրներէ որք ծանր եւ ջեռուցիչ են, ինչպէս ճարպեղէնք, խմորեղէնք, շաքարեղէնք, խիստ համեմատոր հանդերձանքներ եւլն: Բանջարեղէններն ու լաւ հասունցած պտուղները շատ յարմար են տղայոց համար: Ընդհանրապէս, հարաւային երկիրներու մէջ, բուսեղէն սնունդն աւելի պատշաճ է, իսկ հիւսիսային երկիրներու մէջ կենդանական սնունդը:—Գալով ըմպելիներուն, ջուրը լաւագոյն ըմպելին է, եւ պէտք է ուրիշ ամէն ըմպելիէ աւելի գործածել դայն: Կաթն ընդհանրապէս առողջարար է: տղայոց տալու է քիչ գինի, մանաւանդ ջրախառն: Բնաւ ոգելից ըմպելի տալու չէ տղայոց: պէտք է զգուշանալ ջեռուցիչ ըմպելիներէ, ինչպէս թէյ, սուրճ եւ այլն: Ակոսներուն կիտուածին (միգե) պատճառաւ, պէտք չէ խմել ո'չ չափազանց տաք եւ ոչ չափազանց պաղ, եւ մանաւանդ յանկարծ մէկէն միւսին չանցնիլ: Պէտք է կարգ ու կանոն դնել տղայոց կերակուրի ժամերուն մէջ: Անոնց ուտելիք կերակուրներու քանակութեան մասին որոշ կանոն մը չկայ, բայց ընդհանրապէս պէտք է ձգտիլ որ անոնք ժուժկալութեան ունակութիւններ ստանան:

(Շար.)

Մ.

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ԱՐՄՏԵԱՅ ՄՇԱԿՈՒԹԻՒՆԸ

ՊԱՐԱՐՏՈՒԹԻՒՆՔ. — Սեւ ցորենէն զատ, բոլոր արմտիքները միեւնոյն արգասաւորիչ նիւթերուն պէտք ունին, այսինքն՝ բորակածինի (ազոդ) և փոսփորային թթուի (ասիս ֆոսֆորի)։ Ինչպէս ըսինք արդէն, այս երկու նիւթերն արմտիքներուն կը տըրուին ագարակային աղրի ձեւին տակ, որուն պակասը կը լրացնեն անուշադրի ծծմբատը (սիւլֆաթ s'ամօնիաֆ), փթիւրը (մարդու փոշիացած աղը) կամ չորցած արիւնը, և այլն։ Այս պարարտութիւնք հողին մէջ կը դրուին աշնան հերկի ատեն, սերմանումէն առաջ։ Գարնան մանաւանդ երբ բոյսերը տկար են, սոտայի կամ բողբոսի բորակատ կը խառնեն ջուրին հետ, և այնպէս կ'ոռոգեն արտը։

Գլխաւոր կանոն մ'է թարմ աղբի վրայ չցանել արմտիքները, վասն զի այս պարագային մէջ փորձառութիւնը ցոյց առած է թէ արմտիքները պառկելու վտանգին կ'ենթարկուին։ Սակայն փոխադրութեան պարագայի մէջ, կրնանք առուոյտ ցանել թարմ աղբի վրայ։

ՍԵՐՄԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ. — Արմտիքներն ենթակայ են երկու տեսակ հիւանդութեանց, որոնք մանրադիտական սուղկերու ներկայութենէն յառաջ կուզան. ասոնք են ածխահաւուրիւն (charbon) և փսուրիւն (carie)։ Այս սուղկերուն սերմնիկները (spore) ջնջելու համար որք կրնան խառնուած ըլլալ արմտեաց հետ, սերմերը կրաջուրէ կամ արջասպաջուրէ կ'անցընեն։ Կրաջուրը կը պատրաստուի 3 քիլօ չմարած կիր լուծելով իբր 8 լիդրա ջուրի մէջ, Ծծմբաջուր կամ արջասպաջուր պատրաստելու համար ալ 250 կրամ պղինձի ծծմբատ (sulfate de cuivre) կամ արջասպ (vitriol կամ couperose, զանգրպըր) կը հալեցնեն 5 լիդրա ջուրի մէջ։ Այս նշանակուած քանակութիւնք կը բաւեն մէկ հարիւրալիդր սերմնցուի։

ՀՈՂԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ. — Արմտիք ցանելու համար, չի բաւեր որ հողը պատ-

շաճապէս հերկուած որ մաքրուած ըլլայ, պէտք է նաեւ որ ցանքի ժամանակ հողը նստած, հանդարտած ըլլայ, այսինքն՝ արօրին ակօսները ներքին պարապներ չթողուն։ Եթէ ժամանակէն ստիպուած, երկրագործը չկարենայ սպասել որ հողն ինքնին նստի, հանդարտի, հարկ է լողքար մը անցընել անոր համար որ սերմը պատշաճ ու կանոնաւոր խորութեան մը պէտք ունի։ Արդարեւ, եթէ հողը սերմանուելէն ետք նստի, կրնայ սերմը քաշել տանիլ այնպեսի խորութեան մը ուր չի կրնար լոյս տեսնել։ Ասկէց զատ, հողին նստելուն հետեւանօք, արմատները զուրս կը մնան, բան մը որ կը մնասէ աճման, փակչտուն ու կարծր հողերու մէջ, պէտք է ջանալ որ սերմերը թաղուին 3էն մինչեւ 5 հարիւրորդամէդր. իսկ փխրուն հողերու մէջ քիչ մը աւելի խոր կրնան թաղուիլ։ Գարնցան ցորեններուն համար, աւելի մեծ խորութիւն մը պէտք է քան աշնացան ցորեններուն համար։ Հարաւային կամ մանաւանդ չոր երկիրներու մէջ, աւելի խորունկ պէտք է սերմանել քան հիւսիսային և խոնաւ երկիրներու մէջ։

ԱՐՄՏԵԱՅ ՑԱՆԻՔԸ

Վարուցանի եղանակին համեմատ, արմտիքներն երկու տեսակ են, աւեցան և՛ գաւրեցան։ Առաջինը կը պարունակէ ցորենին ինչ ինչ տեսակները, հաճար, մանրահատ գարին, և վարսակին զանազան տեսակները։ Երկրորդը կը պարունակէ ցորենին, գաին և վարսակին այլ և այլ տեսակները, լազուտը, սե ցորենը։ Աշնան ցանքը կը կատարուի Սեպ. 15էն մինչեւ Հոկ. 15, եթէ կ'ուզուի որ բոյսերը մինչեւ աստիճան մը ուժովնան ձմռանէն առաջ։ Հոկտեմբերի երկրորդ կիսուն մէջ կատարուած ցանքը ուշ կը մնայ, եւ նաեւ կրնայ մնասուիլ եթէ չափազանց երաշտութիւն մը յապաղէ սերմերուն ծլումը, կամ եթէ օդը ցրտանայ Նոյեմբերի սկիզբը։ Որքան աւելի կանուխ սերմանէք, այնքան ծլելու աւելի հաւանականութիւն կ'ունենան սերմերը, և հետեւապէս սերմնցուի խոնաւութիւն ալ կայ կանուխ սերմանելուն

տարակոյսը , իր անստուգութիւնը պիտի ջնջէր այդ լուրը ու չի պիտի տառապէր ան , ու հիւանդ չի պիտի ըլլար ասանկ :

Այ համոզուած այսպէս թէ տարակոյսի դաժան որդն էր որ բոյն գրած Ֆիմիի հոգիին մէջ , կրծած էր անոր կեանքին տարրը և որ պիտի փճայունէր անոր աղամանդ մարմինը ,

— Ես եղայ , կը մըմնջէր , աս ամէնուն պատճառը , ես եղայ իմ սիրելի աղջկանս այս ցաւերուն պատճառը , անարժան հայր մը եղայ ես :

Ու կ'ատէր հեռատեսութիւնը , կ'անիծէր հաշիւը , բարոյագիտութիւնը , խոհեմութիւն ըստածը , զորս իբր մարդկային մեծ պարտականութիւններ քաղաքակրթութիւնը մեղի մատնանիչ կ'ընէ անաչառ ու խիստ , և որոնց , սակայն , խաբեբայ առաջնորդութեամբը է՛ն աղետալի քայլը առած էր՝ ետ մղելով բնագոյն ճշմարիտ ձայնը որ այն օրը իր ներսէն կը գոռար և կարծես կ'աղերսէր իրեն որ Ֆիմիին խոստովանէր ճշմարտութիւնը :

Այս խորհրդածութեանց տազնապին մէջ էր երբ դէմքին վրայ լոյս մը փայլեցաւ . ի՞նչ , կարելի չէ՞ր միթէ որ այսօր իսկ խօսէր Ֆիմիին : Այո՛ , ինչո՞ւ չէ , պիտի խօսէր , ամէն բան պիտի յայտնէր , պիտի պարզէր ինչ որ կը ճնշէր իր սրտին վրայ այդ գաղտնապահութեան պատճառովը , և պիտի փրկէր Ֆիմիին այդ որդին կրծող , մաշեցնող , հատցնող ակռաներէն :

Այս խորհրդածութիւններու տազնապին մէջ՝ պաշարուած Ֆիմիի ամէն ի՞նչ խօսելու մտասեւեռումէն՝ կը կենար հոն անհամբերած անոր առաջին սթափումին սպասելու ստիպմամբը , երբ բարձին տակէն թուղթի մը ծայրը երևցաւ աչքին . աչքերը ուշադրութեամբ հոն յառեց աւելի որոշ տեսնալու համար . ձեռքը երկարեց յետոյ , առաւ զայն . թուղթին ծալքերը բացաւ դողդոջ մատներով ու սկսաւ կարդալ անանկ յուզումով մը ուրկէ կարծես շունչը պիտի հատնէր :

Շաբաթ մը առաջուան թուականը կը կրէր այդ թուղթը , հիւանդոտ , դողացող մատներով՝ գրուած տողեր :

Վիմ կտակս

«Գրաւոր կերպիւ կը յայտնեմ այսօր այն խօսքերս զորս ամիսներէ ի վեր ուզեցի կենդանի ձայնով յայտնել ու չը կրցայ :

«Զը կրցայ , որովհետեւ չուզեցի տեսնալ նողկանքի եւ արհամարհանքի արտայայտութիւնը որ պիտի առնէր հայրիկիս դէմքը՝ տեսնալով որ դեռ կը յանդգնէի է՛ն կարելի երկիւղածութեամբը բերանս առնել անունը այն անձին որ ատանկ անարժան նամակ մը գրած էր :

«Որովհետեւ վախցայ որ չի պիտի կրնայի վստահացնել , այնուհետեւ թէ՛ թշնամիէ մը , զրպարտողէ մը զատ ուրիշ մէկը չէր կրնար ըլլալ այդ թուղթերուն հեղինակը :

«Որովհետեւ կասկածեցայ , վերջապէս , որ համոզող խօսքերով հայրս պիտի փորձէր իմ ծրագրէս ետ կեցնել զիս :

«Այդ մտադրութիւնս զրաւոր կը յայտնեմ այսօր , վասն զի այս կերպով ա՛յն օրը պիտի յայտնած ըլլամ զանի ուր հայրս ո՛չ միայն չի պիտի ուզէ ինձի խօսիլ , համոզելու , զիս նպատակներէս ետ կեցնելու համար , այլ չի պիտի կըրնայ ալ , իր դէմը գտնելով անկենդան դիակ մը : — Պիտի հաւտայ , գիտեմ , այդ պահուն թէ՛ վահէն չէր կրնար գրել ատանկ ստորին նամակ մը : Ամէն մարդ պիտի զգայ օր մը թէ իր հոգիին մէջ , իր խղճին խորը Աստուած մը ունի :

«Ենթէ սակայն , այն օրը այդ թուղթը ու մօրս անլուր խօսքերը ինձի է՛ն սոսկալի վախը պատճառեցին ու է՛ն մեծ տառապանքները այնուհետեւ , պատճառն այն էր միայն որ ատոնք կը դատապարտէին զիս որ խղդէի իմ մէջս իտէալս որուն ծնունդովը արդարացուցած էի կեանքիս գոյութիւնը :

«Պիտի ապրէի ալ ուրեմն փուճ, անարգ ու անյոյս կեանքով մը՝ իտէալիս մէջ կաշկանդուած ։

«Ան ատեն մահը աղուորցաւ աչացս առջեւ . մահը ամբողջ յոյսերս պիտի իրականացունէր . մեռնողի՛ն կամբը կը գործադրուի , բնութեան օրէնքն է այս . անիկա պիտի քակէր իտէալիս կապերը ։

«Անկէ ի վեր ամէն անգամ որ մինակ մնացի սենեակիս մէջ , անկողինիս մէջ ծնրադրելով աղօթեցի որ Աստուած ա՛լ զիս չապրեցնէ . Աստուած կը լսէ ջերմեռանդութեամբ աղաչողներուն ձայնը . Ա՛լ այսօր կ'զգամ թէ աղօթելու համար ծունգի իյնալու անկարող եմ . հազիւ գրելու կարողութիւն ունիմ . մահուան դերագոյն բարութիւնը , գեղեցկութիւնը չնչիլ եմ սկսած . ոչ ոք պիտի կրնայ մեռնելու ազատութիւնս կաշկանդել . . .

«Հիմա պիտի յայտնեմ իմ ԻՏԷԱԼՍ ։

«Մայրս զիս արգիլեց այն օրը որ յայտնէի զայն . կարծեց թէ Վահէին հետ ամուսնանալու մտադրութիւն մը պիտի յայտնէի . հայրս դուրս ելաւ սենեակէն որ զիս պաշտպանելու չստիպուի . է՛ն նուիրական անկեղծութեամբս կը խոստովանիմ որ սիրեցի այդ տղան , եւ անոր հետ ամուսնանալը իմ մէկ մեծ բաղձանքս պիտի ըլլար անշուշտ՝ երբ անոր արժանի ըլլայի եւ երբ աւելի կարեւոր չըլլար իմ մտասեւեռումս — իտէալս ։

«Ես այդ տղան սիրեցի անոր տաղանդին , հանճարին համար , ու անոր ճամբայ մը ցուցնելու պէտքէն առաջնորդուած սիրեցի զայն , ճամբայ մը ցուցնելու պէտքէն , այո՛ , քանի որ մոլորեալ միտք մըն էր ան որուն շարունակութիւնը պիտի կրնար զայն կորսնցունել ։

«Ազգի մը մէկ մեծ փառքը կը կազմեն անոր գեղարուեստական արտադրութիւնները . ու մենք գրեթէ դեռ չենք ունեցած երաժիշտ երգահան մը . յանցանքը ազգինը չէ՞ ,

բան մը չիմացաւ , բան մը չ'զգաց ան . եթէ իմանար իսկ , պիտի թողուր որ հոն՝ ինկած տեղը՝ մնայիր : Հայրդ էր , հայրդ՝ որ նախագագացումին շինած խռովայոյզ երազէն ընդոստ արթնցած , քովդ վազած նոյնհետայն , և զքեզ իբրեւ թռչնիկ մը , իր գուրգուրոտ թեւերուն մէջ առած , հազար զգուշութիւններով և խանդաղատանքի , գութի համբոյրներով քու բոյնիդ , անկողինիդ մէջ կազմուած տխուր փոսիկին մէջ դրած էր վերստին . հայրդ , այո՛ , որ քեզ իր զաւակը ունենալու համար միայն կ'ապրէր , անգին զոհողութիւններ կ'ընէր , որ քեզ վերստին առողջացած տեսնելու յոյսովը տակաւին չէր խենդեցած ։

... Հազիւ քանի մը վայրկեան գիտակցութեան շնորհը վաշեւած , Թիմի դարձեալ ինքզինքը կը կորսնցունէր և խել խօլ — թերեւս ալ շա՛տ իմաստալից — բաներ կ'սկսէր խօսիլ որոնց մէջ «Հայր... Հայր...» կամ «Վահէ՛ , մի՛ երթար , Վահէ...» խօսքերը պաղատող յանկերգի մը պէս կը հնչէին մերթ ընդ մերթ , մեղմ , շատ մեղմ , շունչ-ձայնով մը , իր այդ կարեկցութիւն շարժող զգայագիրկ վիճակին մէջ իսկ կարծես զգուշանալով գաղտնապա՛ : Ըլլալ , ահարեկելով որ կ'ելլար կ'իմանար մայրը ։

Իր աղջկան , իր հոգեհատորին այս եղկելի վիճակին , հայրը հանդիսատես կ'ըլլար անպատմելի տանջանքներով . սիրտը կը խոցոտէր , արիւն կը քալէր հոգիէն ու մերթ , իբր թէ յիմարացած , աչքերը ցաւոտ նայուածքով մը յոյսի վերջին հանգրուանը եղող երկինքին կը բարձրացունէր ու անկէ Թիմիի հալած , մաշած դէմքին կ'ուղղէր , անոր անիկոստ խօսքերը կը լսէր և գլուխը ձեռքերուն մէջ առած՝ լուռ հառաչանքով մը բաներ մը կը մըմնջէր ։

— Ա՛խ , ինչո՞ւ համար , կ'ըսէր ան ինքն իրեն , իմ մաթեմատիքական մանրադննին հաշիւներուս վրայ հիմնուելով , ինչո՞ւ համար անոնց կարծուած-բարեբար դերին ապաւինելով՝ այն օրն իսկ Թիմիին չը յայտնեցի այդ գաղտնիքը : Իր

բուն դէմ ամէն բան մթննալ սկսաւ . գլխու սոսկալի պտոյտ մը ունեցաւ ու հոն ինկաւ թեթեւ աղմուկով մը , նուաղած գրեթէ , գիտակցութիւնը կորսնցուցած :

Յարաբերաբար Ֆիմի հիւանդ մարմինն և նրբացած հոգւոյն՝ ուրակոնային սաստկութիւն ունեցող այդ յուզումները իր մէկ երկու ամսուան ոյժը մէկ անգամէն սպառեցին :

Հետեւեալ օրը տենդ ունէր , միջաւանջներ կ'ունենար և կը զառանցէր :

Օրը գրեթէ իրիկուն եղած էր երբ անգամ մը խելքը վրան եկաւ քիչ մը :

Օգը փոխուած էր . սաստկօրէն փչող քամի մը տունը կը ցնցէր ու կ'սպառնար ապակիները խորտակել :

Իր այս կէս գիտակցութեան վայրկեանին , Ֆիմի , սկսաւ , փայլակի մը պէս , երազի մը պէս վերապրիլ նախորդ աւօտի անդրաշխարհային իրականութեան ու անոր պարզեւած գերբնական ու անձկալից երանելիութեան մէջ :

Տաք սարսուռ մը գլխէն մինչեւ ոտքերը սահեցաւ ու պաղ քրտինք մը սղողեց զինքը , կ'երեւակայէր այն րոպէն ուր Վահէ իր դէմը արձանի պէս կեցած էր լուսընկային պայծառ լոյսին մէջ , ինչ վայրկեան էր այդ , ինչ անուշ էր այդ միջոցը , ինչո՞ւ սակայն յետոյ հեռացած , աներեւութացած էր . ինչո՞ւ չէր թողած իրեն որ ակնթարթ մը աւելի վայելէր այդ վայրկեանը . չէ՞ր հասկցած թէ ինքն էր պատուհանէն նայողը . . . :

Եւ սարսափեցաւ յիշելով յանկարծ թէ ինք իր անկողինը չէր կրցած վերադառնալ : Հիմա սակայն անկողինին մէջն էր : Ե՞րբ ուրեմն , ինչպէս , ո՞վ զինքը իր տեղը փոխադրած էր . անէ՞ծք , մա՞յրը արդեօք . . .

Չէ՛ , Ֆիմի , չէ՛ , ցաւագին աղջիկ , մի՛ տագնապիր . երբ դուն հոն ինկար , մայրդ կը քնանար հանդարտութեամբ .

անհոգ , շահամոլ ազգիներ . մենք Եւրոպացի երաժիշտներու կը կարօտինք մուրացկաններու պէս , ազգային նուագահանդէսի մը համար , որուն յայտագիրը օտար արտադրութիւններու շարք մըն է միայն : Երաժշտութեան է՛ն մեծ յարգանքը կ'ընէ այսօր Եւրոպա , իսկ մեր մէջ դեռ սաղմնային վիճակի մէջ իսկ չէ ազգին ծախքով երաժիշտներ պատրաստելու գաղափարը ու կարելիութիւնը :

«Մեր հարուստներէն շատերը — բացի անոնցմէ որոնք , տգէտ , անհոգ , անգութ են , որոնք չունին Գեղեցիկին ու Բարձրին ո՛չ գիտակցութիւնը , ո՛չ ըմբռնումը — այո՛ , շատերը ասանկ անգին ծառայութեան մը վրայ խորհելու առիթը կամ թելադրող պարագան չունենալնուն համար է որ կոյր ու դանդաղ մնացած են :

«Այսօր ես երբ կրցայ նշմարել այն արգելքը որ կ'սպառնար Վահէին , ու երբ այդ արգելքը վերցնելու կարելիութիւնը ունէի , երբեք չի պիտի կրնայի մեկուսի մնալ :

«Կը խնդրեմ ուրեմն իմ հօրմէս որ Վահէն Եւրոպա շրկէ : Ինծի համար դրամ մը վերապահուած է . կ'ուզեմ Վահէին զարգացմանը յատկացունել այդ դրամը , — դրամօժիտս :

«Յ . Գ . — Այս թուղթիս հետ ուրիշ թուղթ մըն ալ կայ բարձիս տակը դարձեալ . պիտի խնդրեմ հայրիկէս որ իր հասցէին շրկէ զայն . այդ տողերուն տակը հայրիկիս ստորագրութիւնը դրած եմ . ուրեմն իմ գրած ըլլալս թող չը յայտնուի . ես այս թուղթը գրեցի պարզապէս , որովհետեւ վստահ էի թէ վերի տողերէն ետքը հայրս ա՛լ ուրիշ բան չի պիտի կրնար գրել . միայն , թերեւս , աղատեցի հայրս իրեն ա՛լ սիրելի աշխատութենէ մը :

«Յաջողութիւն , Վահէ , գերեզմանէս ալ . . .

Յ Ի Մ Ի


ԹԵՐԹՕՆ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

1411

Ծրագիրներու է՛ն բարձրը , յղացումներու է՛ն թանկագինը և գաղափարի հրաշակերտ եղող Ֆիմիին գրած այս դիւցազնաբոյր տողերը կարդացած պահուն , որոնք վհուկ անակնկալի մը թափը կուտային իր գանկին , Նորէնոֆ՝ ա՛լ անկարող շարժում մ՛ընելու , չէ՛ր կրնար ետ մղել իր հէք կուրծքին տակ մըրկող ու մինչեւ իսկ կոկորդը ելլող վիշտի , սիրոյ , զղջումի , հիացումի , գութի հեկեկանքը որ ուսերը կը ցնցէր , կը թոթուէր անդադար :

Հեկեկանքը դեռ կոկորդը , գտաւ , առաւ այդ միւս թուղթըն ալ , կարդաց արցունքներուն մէջէն ու ալ առանց շուրջը նայելու , սենեակէն դուրս խոյացաւ , իր սենեակը գահավիժեցաւ , շտապով դարան մը քաշեց , թուղթեր դուրս հանեց ու այդ նամակին հետ պահարանի մը մէջ փակելով , գրպանը նետեց ու յիմարական փութկոտութեամբ մը տունէն դուրս նետուեցաւ սա բառերը մոլտալով ինքնիրեն խղզուկ ձայնով մը :

— Ուրեմն , դահի՞ճ մը եղայ ես , որդեսպան հա՞յր մը եղայ ես... բայց պիտի ապրիս դուն , իմ հրեշտակս... ապրիս պիտի... փափաքներուդ իրագործուիլը տեսնաս պիտի :



ԹԵՐԹՕՆ ՀԱՆՐԱՔԻՏԱԿԻ՛

1412

ցուցած մեղամաղձիկ հրապոյրը երբեք այսքան հրաշագեղ չէր եղած : Հեռուները՝ քաղցր , արցունքոտ մշուշ մը կիսով կը ծածկէր ծովը ու լեռները ու վիլլան կը շրջապատուէր նկարով մը որ երբեք այսքան խորհրդաւոր , այսքան հեշտալի ու խռովիչ չի պիտի ըլլար :

Եւ այս վեհախորհուրդ լռութեան մէջ այդ երկու էակները կը թուէին յափշտակութեամբ իրարու անձի մէջ ընկղմած ըլլալ :

Հեռաւոր նաւի մը տխրահունչ սոյլը լսուեցաւ այս պահուն հառաչի մը պէս , և օդին մէջ ասուպ մը մարեցաւ բաղձանքի մը պէս : Ծառերուն մէջէն մեղմ շունչ մը անցաւ , սարսուացին ազազուն տերեւներն աշնահար . ու մրմունջը որ ելաւ ատիէ , փափսուքն էր կարծես սիրահալ հոգիներու կամ եթերային ներդաշնակութիւն մը փախստեայ՝ երազ համբոյրներու , և այն տարտամ հեւքը որ օդին մէջ կը բաբախէր , կը թուէր ըլլալ համր պաշտումի մը թախծագին խոստովանութիւնը կամ լուռ հրաժեշտի մը դեռսպառ ողջոյնը... :

Ֆիմիի այս անբաղդատելի , գերասուրբ վայելքը , սակայն , վայրկեան մը չէր տեւած , երբ , աւա՛ղ , մէկէն հեռանալ էր սկսած Վահէ :

Պոռալ ուզեց Ֆիմի . « Վահէ... Վահէ... մի՛ երթար , վայրկեան մըն ալ կեցիր... » բայց չը կրցաւ . ձայնը կոկորդին մէջ կը խղզուէր... :

Ու Վահէ կը հեռանար սակայն ...

Կեցաւ հոն Ֆիմի , սպասեց հոն , մինչեւ որ այդ կարօտալիւր սիլուէթը անհետ եղաւ ծառերուն խտութեան ետեւ , մինչեւ որ անոր խռովիչ և տխրանուագ ոտնաձայնը ալ դադարեցաւ հնչելէ :

Այն ատեն Ֆիմի ա՛լ զգաց թէ կաթիլ մը իսկ ոյժ չունէր . ուզեց անկողինը վերադառնալ , բայց չը կրցաւ . աչքե-

մէջ, Գարնան ցանքը հարաւային երկիրներու մէջ տեղի կունենայ Փետրուարին, իսկ հիւսիսային երկիրներու մէջ ընդհանրապէս Մարտին: Գալով լազուտին և սև ցորենին, որոնք սառնամանիքէն կը վախնան, սերմանումը կը յապաղեն մինչև Մայիս:

Սերմին քանակութիւնը — Յորենի, հաճարի, գարիի և վարսակի համար, սերմի մի և նոյն քանակութիւնը կը գործածուի, այսինքն էքդար զլուխ 2—3 հարիւրալիտր: Ո՛վ որ ցանցառ կը ցանէ, կուռ կը քաղէ, ով որ կուռ կը ցանէ, մանր կը քաղէ: Եւ արդարեւ, եթէ չատ խիտ ցանէք, բոյսերն իրարու դէմ սեղմուելով, բաւական լոյսէ ու օդէ զրկուելով, պէտք եղածին պէս չեն կրնար աճիլ, այլ կ'ոսնին կը ճուլին, չեն կրնար տոկալ ոչ հովուն և ոչ անձրեւին, և թեթև հունտ միայն կուտան:

Գարնանային աօխսուքիւնք. — Երբ հողը կարծր և կուռ է, ձմեռէն ետք պէտք է քանիցս եւ այլազան ուղղութեամբ մատղաշ բոյսերուն վրայէն անցընել երկաթեայ ակռաներով մանկեռ մը: Լողքարի պտոյտ մը օգտակարապէս պիտի ամբողջացնէ գործողութիւնը եւ մանկեռին շրջած բոյսերը պիտի վերահաստատէ: Կարգ կարգ սերմանումն այս պարագային մէջ մեծ առաւելութիւններ կ'ընծայէ, մանաւանդ եթէ 18էն մինչև 20 հարիւրորդամէջը բացութիւն մը թողուած է կարգերուն միջեւ, վասն զի այն ատեն երկրագործը ձիավարիկ մարկելով մը կրնայ ջնջել մոլաբոյսերը, միանգամայն հողով պատելով բոյսերուն տակը: Բայց եթէ սերմերը սփռուելով ցանուած են, այն ատեն ձեռքով միայն կարելի է քաղահան ընել հողաքիւրով (binette): Այս աշխատութիւնք կը կատարուին՝ երբ բոյսերը 20էն մինչև 25 հարիւրորդամէջը բարձրութիւն ունին, այսինքն սովորաբար Ապրիլի մէջ, անշուշտ չոր օդ մը ընտրելով:

Շարունակելի

Բ. Պ.

ԱՄՈՒՍՆԱԼՈՅԾՆ ԱՊԵՐՋԱՆԻԿ

Գ Ի Ի Ղ Ա Վ Է Պ

Մասն Ա.

ՈՒՅՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ

Ստանի յատուկ ցեղային աւանդութեանց և կրօնական դաւանութեանց համեմատ, նոյն օրը հարս ու փեսայ ըլլալիք բոլոր նշանած աղջիկներն ու մանչերը պսակեց Տէր Տաթեւ: Նահապետաբարոյ երկրին սեփական ու սովորական արարողութեամբ, հարսանեկան հանդէսներն ու խրախճանութիւններն սկսած էին, որք ընդհանրապէս կը տեւեն երեք օր, ցերեկ ու գիշեր:

Ութ օրն անցեր էր: Տէր Տաթեւի աղջիկը որ այս Մայիս 24ի նոր հարսներէն մին էր, վերադարձած էր կեսուրին տունէն իրիցկին մօր տունը, կէս գիշերին, աչքերն արտասուելէն ուռեցած, դմդուկած դէմքով, 16 տարեկան դեռ՝ այլ կարծես 60—70 տարեկան կնոջ մը չափ խռուած, ութ օրուան մէջ՝ ութսուն տարիներու տառապանքներով հալած, մաշած կեանք մը վարողի պէս:

Փոքր քոյրը բացաւ դուռը, երկու քոյր իսկոյն իրարու վիզ պլլուած, մութին մէջ իրարու հետ քանի մը բոպէ փսփոսցին, եւ փսփոսալէ աւելի խղճուկ լացերով հեկեկացին: Երկուքն ալ անասելի երկիւղով ու անթով մը շանթահար եւ դողահար, դողդուռն քայլերով վեր ելան, իրենց ու սենեակն առանձնացան:

Սովորութիւն մը կար Ստանի մէջ թէ Մայիս 24ին չի պսակուելիք աղջիկները տունը կը մնային իրենց ծերունի պապուն կամ մամուն հետ. ուխտագնաց չէին լիներ: Ուրիշ սովորութեան մը համաձայն ալ ուխտատեղւոյն մէջ հարսնացեալք՝ երեք օրէն վերջ՝ դէպի Ստան՝ իրենց գիւղը կը վերադառնային, հարս ու փեսայ, իբրեւ այր և կին, ի միասին ապրել սկսելու համար:

Կրտսեր քոյրը, Զարուհին, մինչեւ որ վառեց ճրագը, երէց քոյրը, նորհարս նուարդ, նուաղած, հոգեւարքի պէս ցամաք տախտակամածին վրայ ինկած, փռուած, մազերը



փետտած, կը հառաչէր, և կարծես իր վերջին շունչը կը խորդար:

Զարուհին, հազարումէկ սրտածմլիկ ու լեզուանի փաղաքշանքներով, իր տառապեալ քոյրը մխիթարելու, սիրտ տալու համար, աղջկանց յատուկ մայրական խանդաղատուն զգուանքներով, նուաղեալ Նաւարդին մեռելատիպ գլխիկը գիրկն առած, ծնկիկն անոր բարձ տուած, հաղիւ կրցաւ պահ մը սթափել նորհարս քոյրը: Խղղուած շունչով մը, մարած մարմնած ձայնով մը կը խօսէր, կը հծծէր՝ զաքարէացած քոյրը լեզու հանելու համար, վախնալով որ կէս գիշերուն վերին յարկին մէջ՝ ծանր ու թանձր քունով խոշոր խոշոր խորդացող իրենց հանին չարթննայ յանկարծ, իրենց լաց ու կոծի աղմուկէն:

Նուարդ բռնի զսպելով զինքը լափող, սպառող զայրոյթը, կրծող ու փուռող նախատինքը, հատկեալ հեծկտանօք մը շշնչեց՝ մէկ քանի բոպէի մէջ քան զինքն աւելի յանկարծահաս վշտէն ծիրած ծնգած քրոջը ականջն ի վար աւելի քան երեսն ի վեր, կարծելով թէ այլևս կորսուած երեսն է. եւ երես նայելու երես չ'ունի. «Բոյր իմ, կը թոթովէր, քնացանք, արթնցանք, մեր անկողինը առտուն կանուխ՝ ներս ու տալս ինձ ժողվել, ծալլել, վերցնել չէին ներեր: Եւ ահա եղաւ առաւօտ եւ երեկոյ. օր մը, երկու, երեք և չորս օր: Իններորդ օրն էր՝ ներս ու տալս կ'անչեցին զիս ճիշտ այն խոփող դէմքով որով սովոր են դահլիճներն իրենց սուրովը գլխատել դատապարտեալը, և ըսին ինձ. ա'ռ ինչ օփիտ որ հետդ բերեր ես և ել գնա', վերադարձի՛ր այն տունը ուր ծներ ես: Մենք քեզ չենք կրնար հարս պահել մեր տունը: Կուսական կանթեղդ մարած ու ձէթդ սպառած՝ մեզ հարս եկած ես: Ու սկսան բոլոր այն բաները՝ զորս ուխտաւոր հարսնետորք նուիրած էին և Տէր Հայրն ու իրիցկին մայրիկն՝ իրենց ազգականներով, ծուխերովն ու բարեկամներովը ընծայած էին իբրեւ օփիտ ու հարսանեկան պարգև, ծալլել, ծրարել ու զետեղել անտուկներուն մէջ: Զէի կրնար խօսել. կ'արտասուէի, դէմքս ձեռքերուս մէջ սեղմած, չէի կրնար ու չէի ուզեր մեկնիլ ա-

ռազաստիս սենեկէն: Համր արցունքներովս, ձեռքի, դէմքի պաղատագին չարժուանքովս, աղաչող ձեւերովս արգահատանք, կարեկցութիւն կը մուրայի: Ասպառած սրտի մը կարծրութեամբ զիս իրենց սենեկէն դուրս ըրին բռունցքի և աքացի հարուածներով, հրելով, հրմշտկելով և ամէն կատաղի ու լկտի հայհոյանքներով, անէծքներով ու նախատինքներով, հարս գացած տանս սանդուխներէն վար զլտորցուցին: Ի դո՛ւր ձեռքերովս սանդուխին մէն մի աստիճանին կամ մատուրնբուն կառչած՝ չէի ուզեր զատուիլ: Իրենց ոտքի կիցերն ու փայտի հարուածները կարկուտի, թուրի հարուածի պէս կը տեղային կը կտրէին մատներս:

Բէշնէցի՛ն, տարին, նետեցին զիս բակը, բակը, ուր ա՛լ նուաղած՝ մնացեր եմ մինչեւ կէս գիշեր: Հոս գալէս հաղիւ ժամ մը առաջ՝ զգացի թէ ձեռք մը կը սրբէր թէ կը լիզէր դէմքս, ձեռքերս: Մեր հաւատարիմ գամփոն էր: Զը գիտեմ, ի՛նչպիսի նախազգածութեամբ իմացեր ու հոտուրտալով եկեր գտեր էր զիս: Պլուեցայ վզին, պագի երեսները, հոտուրտացի ցուկը, որ շուն ըլլալով հանդերձ՝ մարդերէն աւելի մարդասէր ու տիրասէր է: Կարծես ինքն ալ խղճուած ցաւերուս զգայակից, երբեք չհանցեց: Միայն մերթ ընդ մերթ խուլ իմն կը մոլտար երբ տանը մէջ ոտքի դըփրգուքի ձայն մը կը լսէր: Պահապան մեր շունին ներկայութենէն քիչ մը ոգեւորուած, սոյն առօթալի, նախատուած վիճակս զրացիներուն ալ կոահել չտալու երկիւղս ու զգուշաւորումս ինձ նոր ոյժ, նոր ոտք, նոր ձեռք, նոր սիրտ, նոր միտք տուին: Վրաս գլուխս քիչ մը շտկոտելով մեր շանն հետ եկայ, ինկայ տունը: Ահա՛, սիրելի՛ քոյրս, Զարուհի, վիճակիս պատմութիւնը, հեկեկաց նըռարդ գոգ մը արցունք թափելով անոր գիրկն ու ծոցը, և աւելի պի՛րկ պլուեւով իրեն արտասուակից ու վշտակից քրոջը:

Զարուհի՛ որ Նուարդին մէն մի բառերը ուտելու պէս կը ծամէր ու կը ծամծամէր մտքին մէջ ու ակունքներով կ'կրճատէր սիրտը, իր անհուն, անսահման վիշտը կը թաղէր խոր խոր փորուած հոգւոյն փեռեկանքին ու սրտին խշխշանքին մէջ, աչքերը խոշոր բա-

ցած, դողահար ձեռքով՝ զրպարտութեան ու զրկանաց վայրագագունին ողջակիզուած, զոհուած քրոջը դալկահար ճակատը և բաբախուն կուրծքը շոյելով, շփելով, իրենց երկրին յատուկ քուն բերելիք աւանդական դեղերէն քանի մը տեսակը խմցնելով Նուարդին, և ինքն ալ անոնցմէ քանի մը ումպ ի միասին առնելով պառկեցուց քոյրն ու քնացուց:

Դիչերուան հսկող ճրագին հետ ինքն ալ իր քրոջ արտասուածքաց սնարին վերեւ՝ կէս քուն, կէս արթուն, մինչեւ առաւօտ՝ երեսն երեսին հետ կարած կարկտածի պէս մնաց ճմրուած, ճմրթկուած, եւ մտմտութեամբ մէջ թաղուած:

Տէր Տաթև և բոլոր ուխտաւորք ու բոլոր հարսանեւորք, բոլորովին անտեղեակ Նուարդի սոյն լքեալ, նախատեալ վիճակին, կը շարունակէին իրենց սովորական տօնին ու հանդէսներուն սրտազեղ հրճուանքն ու զուարճանքը: Ստանի բարեբաստիկ թէ չարաբաստիկ երէցը, Նոյ Նահապետին պէս Ակոռիի նեկտարով զգլխած կամ Գալիլեացուոց Կանա քաղաքի հարսանեաց մէջ Յիսուսի նման այգիներուն գինիները հանդիսականաց հետ հատցնելէ վերջ, ջուրերն իսկ գինիի վերածելու չափ կ'երգէր, կ'ներբողէր, կ'օրհնէր, հարսնացեալներու նոր կեանքերը, կ'երանէր անոնց ներկան ու ապագան:

Նախագահելով ուխտաւորաց մեծագոյն հանդէսին, իրեն և այլոց խնամիններն ալ շուրջը խիտ առ խիտ դասաւորած, խանդոց շունչով մը կ'եղանակէր Մայիս 24ի ուխտաւորաց պսակադիր քահանաներու յատուկ սա աւանդական հարսնանուագը, որ մեծ Գողթան վիպասանաց, կամ Թուելեաց երգերուն միւսոնարոյր շունչը կը բուրբէին կամ կը յիշեցնէին թէ՛ բանասիրօրէն և թէ՛ հնագիտօրէն:

ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՐՁ ԴԱՍԵՐ

Ս.

Զարմանք, Հեաւերբութիւն, Գառնում,
Ծանօթութիւն

Սոշոր վերնագիր մը, անանկ չէ՞. մեծ թո՛ղ չերեւայ քոյս անունը և ո՛չ ալ խրտչեցուցիչ: Սոյն գիտութիւնը նոր չէ. աշխարհի արարչութեան հետ ծնաւ, շատ ծեր է, ոչ սակայն ըստ առածին թէ «Գայլը տարիքն առնելով շուներուն նշաւակ կ'ըլլայ»: Իմաստասիրութիւնը օրօրօցէն կ'սկսի, եւ մեր առօրեայ կեանքին ամէն մի վայրկեան ներում յիշեալ գիտութեան հետեւողներ ենք: Ընթերցողք պիտի ըսեն այժմ թէ ամենքս ալ առ հասարակ իմաստասէր ենք: Այո՛, և այդպէս է, ահա թէ ինչո՞ւ. եկէք հիմա ինձ հետ, սիրելի ընթերցողք, քաղաքին մէջ պտոյտի մը ելնենք, փոքրիկներն ալ հետեւնի՞ր առէք, մի՛ վռնտէք զանոնք, «Թո՛ղ տուք մանկտոյդ դալ առ իս», եւ պիտի տեսնէք թէ անոնք իմաստասիրութեան թէ՛ ուսանողներ են եւ թէ՛ ուսուցիչ: Պտոյտի նկարագրութիւնը բանաստեղծներու կը թողում, անոնց վառ երեւակայութիւնը ի հանդէս կրնայ բերել զայն: Ա՛լ յոգնեցանք կարծեմ, համբերեցէք, հիմա դադար պիտի ընենք. փոքրիկ ուսուցիչը հարցումներ պիտի ընէ, մտիկ ընենք:

— Տեսէ՛ք, հայր, հոն ժամագործի մը խանութ կայ, տե՛ս, տե՛ս, հայր, առիւծը իր գլուխը կը շարժէ. իրաւցնէ առի՞ւծ է այն:

— Ո՛չ, տղաս, ժամացոյց է այն:

— Բայց, հայր, դասագրքիս մէջ նկարուած առիւծի մը պատկերին կը նմանի:


Ի՞նչ տպաւորութիւն ունեցաւ տղան. զարմանք ազդեց տղուն, անանկ չէ՞, ինչպէս նաեւ մեզի:

— Չէ՛, տղաս, իրաւցնէ առիւծ չէ առիւծ, շինծու է, քալէ՛, ալ երթանք, տղաս,

—Չէ՛, հայրիկ, քիչ մ'ալ սպասենք։
 —Ինչո՞ւ, տղաս։
 —Ո՞վ չինձ է, հայրիկ, այս առի՞ծը։
 —Ժամագործը, տղա՛ս, քալէ՛, ալ տուն երթա՛նք։
 —Բայց ինչո՞վ չինեց, հայրիկ։
 —Ձանազան մեքենաներով։
 Հայրը քայլ մ'առնելով.—Բալէ՛, տղաս, յոգնեցանք։
 —Բայց, խնդրեմ, հայրիկ, կեցէք ի՞նչ պէս չինեց։
 —Տուն երթանք, տղաս, չանօթեցա՞ր. մեր տան քով ժամագործ մը կայ, անոր կը հարցնենք։
 —Ինչո՞ւ համար չինեց արդեօք։
 —Ժամանակն որոշելու և անով դրամ չահելու համար։
 Ահա զարմանքին հետեւանքը. հետաքրքրուեցաւ տղան, անանկ չէ՞, եւ իր հետաքրքրութեան ապացոյց չե՞ն միթէ իր հօրը ուղղած հարցումները։
 Տղուն հայրը բարեկամ մը տեսաւ և խօսակցութեան սկսաւ։
 —Հայրիկ, ա՛լ երթանք։
 Տղան իր հետաքրքրութիւնը գոհացուց, սակայն ո՛չ ամբողջովին. ժամացոյցին կամ այդ առի՞ծ ժամացոյցին ի՛նչպէս չինուած ըլլալը ժամագործին պիտի հարցնէ։ Տղան իր տունը, մենք ալ մեր տունը և խորհրդածենք մեզ տուած դասին վրայ։ Արդեօք մենք ալ նմանօրինակ հարցումներ պիտի չընէինք, եթէ անձանօթ իրի մը հանդէպ գտնուէինք։ Ուրեմն մենք ալ կը զարմանանք եւ կը հետաքրքրուինք։ Կ'ուզէ՞ք որ այդ հարցումներուն թուումը մենք ալ ընենք քերականական ոճով մը. այդ հարցումները թուով չորս են. 1. Ի՞նչ նիւթով չինուած է իրը։ 2. Այդ իրը ըլլալու համար, նիւթն ի՞նչ կերպարանափոխութիւններ կրեց։ 3. Ո՞վ չինեց, կամ ի՞նչ է անոր արաչական պատճառը. 4. Ի՞նչ նպատակի համար չինուեցաւ եւ կամ ի՞նչ է անոր վախճանական պատճառը։ Այս չորս հարցումներն երբ ընենք, կ'ուզե՞նք արդեօք որ անպատասխանի մնան. անշուշտ ո՛չ. եթէ մնան, տղան տակաւ ին ժամագործին խանութին առջեւ պիտի սպասէր, յոգնութիւն,

անօթութիւն նուազ ավդեցութիւն պիտի ունենային։ Ուրեմն եթէ այդ չորս հարցումներն ընենք կամ ընեն, միշտ պատասխանի մը կ'սպասեն կամ կ'սպասենք, որուն դասում անունը կուտանք։ Բայց արդեօք այդ պատասխաններուն ամենն ալ ճիշտ են կամ իրականութեան համաձայն են. կրնանք սխալիլ. եթէ ճիշտ են, այդ դատում ծանօթութիւն անուան արժանի կ'ըլլայ, Գիտէք կամ լսած էք անշուշտ թէ վիճաբանութեան առարկայ եղած է որ արդեօք Լուսնոյ մէջ գործարանաւորութիւն կա՞յ թէ ոչ։ Եթէ կայ, այդ դատաստանը ծանօթութիւն է՝ կայ պնդողին համար. եթէ չկայ պնդողին համար, եթէ ու է միջոցաւ կամ եղանակով հաստատուի այն կամ ոչը։ Ասոնք երկուստեք ալ դատումներ ձեւացուցին, քանի որ հարցումներու պատասխանեցին։ Կ'ուզէ՞ք որ հոս պահ մը ձեզի մտածել տամ։ «Ամէն ծանօթութիւն դատում է, բայց ամէն դատում ծանօթութիւն չէ»։ Եթէ կը սիրէք վիճաբանութիւնը, վերոյիշեալ տողերը կրնան վիճաբանութեան առարկայ ըլլալ ձեզ համար։ Գիտեմ որ շատ չպիտի յոգնիք եւ ձեր վիճաբանութիւնը կարճատեւ պիտի ըլլայ. հետեւաբար մեր սոյն դասին եզրակացութիւնը ընելով՝ վերջացնենք առաջին յօդուածը ձեր վիճաբանութեան հետ։ Ամէն մարդ, մեծ թէ պզտիկ, կը զարմանայ և կը հետաքրքրուի, իր հետաքրքրութիւնը հարցումներ կ'ընէ, պատասխաններով կը գոհանայ. դատումներ կը կազմէ եւ անոնցմով ծանօթութիւններ կը չինէ։ Կարծեմ բաւական օգտուեցանք մեր փոքրիկ դասատուէն որ անօթեանալով տուն մեկնեցաւ։

ԹԱՓԱՌԻԿ



ԳԱԽԱՌԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՇՏՈՐՈՒՄՆԵՐ

* * * Երբ մեռել անցունեն ճամբէ մը, այդ տեղի տուներուն բնակիչներն ամենքն ալ ոտքի կ'ելնեն մեռելիոյ չըլլալու համար: Եթէ մէկը տկար է և անկողնոյ մէջ պառկած, ոտքի կ'ելնէ և անկողինը կը տեղափոխեն:

* * * Պղտիկ տղտքներ երբ ունենէ յանցանք գործած են ու չեն խոստովանիր, կամ ո'ւնէ մէկուն վրայ կասկած մ'ունին, անոր եղունգը կը կտրեն և կրակին վրայ կը ձգեն. երբ եղունգն այրի և պայթելու ձայներ լսուին՝ յանցաւոր է այն մարդը և ընդհանրապէս գող մը: Այս կերպով կը նախապաշարեն միամիտ մանկիկը՝ որ հաւատալով այդ սպառնալիքին՝ եթէ արգարեւ յանցաւոր մըն է, կը կարմրի:

* * * Երբ յորդառատ անձրեւներ տեղան երկար ժամանակ, ընդհանրապէս՝ խորովածի երկու չիշերով խաչ մը կը կազմեն դետոնին վրայ՝ որպէս զի անձրեւը դադարի կամ խաղաղի:

* * * Երբ մանկան մը լեզուն կը թոթոզէ կամ ուշ կը սկսի խօսիլ, Ս. Նիկողոսի անուան նուիրուած ունէ եկեղեցւոյ բանալիները բերանը կը դնեն և քանի մը անգամ կը դարձնեն զայն:

* * * Խնամիներ կատուի կամ շան ձագ չեն տար իրարու, որովհետեւ անգամ մը արդէն իրարու աղջիկ կամ մանչ տուած ըլլալուն համար գոտութեան պատճառ կը համարին:

* * * Աճառը իրարու ձեռք չեն յանձներ որպէս զի կոխ չպատահի երկու բարեկամներու միջեւ:

* * * Նորածին մանկան օրորոցին քով հացի կտոր մը անպակաս կ'ընեն գլխուն կողմէ՝ զայն փորձանքէ ազատ պահելու համար: (Տեղ տեղ հիւսայ սկսած են հացին տեղ ափսոն դործածել):

* * * Երբ զաւակ կը ծնի, ութ օր ետքը կը լողցնեն զայն ու յետոյ հացի և կամ դրամներու վրայ կը պառկեցնեն ու կը տարուբերեն՝ մաղթելով որ նորածինն առատութեան մէջ ապրի, ուտելու համար հացը անպակաս ըլլայ և ապրելու համար ալ դրամը:

* * * Երբ փտած ակռան կը հանեն, ոտնակոխ չեն ձգեր զայն. պատի մը ծերպը կը դնեն կամ եկեղեցիին տանիքը կը նետեն: Եթէ ակռային տէրը դեռ փոքր է և նորէն ակռայ կրնայ ունենալ՝ օխուկ գնա՛, գառնուկ եկո՛ւր՝ կ'ըսեն և ապա կը նետեն ակռան:

* * * Երբ կին մը յղի է, շատ կը փայփայեն զայն թէ՛ տնեցիք և թէ՛ դրացիք: Ասկէ զատ եթէ հոտաւէտ կերակուր մը պատրաստեն, այդ յղի կնոջ կը կերցնեն անկէ որպէս զի մանկիկը չվիժէ:

* * * Երբ մանկիկը ակռայ հանէ կամ տարին բոլորէ, վրան կորեկ կամ եգիպտացորեն եւ կամ ընդհանրապէս չաքար կը ցանեն մաղթելով որ իր կեանքին ամբողջ ընթացքին մէջ քաղցրութիւն և առատութիւն վայելէ:

* * * Երբ մէկուն աչքը խաղայ կամ պաղի՝ հեռու տեղէ լուր առնելու նշան է:

* * * Երբ ճրագի պատրոյգին ծայրը ուրի, կ'ըսեն թէ չարիք մը կը նիւթուի անոնց համար, որոնք այդ լոյսին շուրջը բոլորուած են:

* * * Երբ երազի մէջ մուշտակ հագնին, ծանրութիւն մըն է և դժբաղդութեան նշան կը համարին:

* * * Աւագ Հինգշաբթի երեկոյ մանր քարեր կը հաւաքեն եւ քացալի մէջ դնելով զանոնք, քիչ յետոյ բերանին կ'առնեն ուտելու ձեւեր ընելով և կը չարչարեն ինքզինքնին ի յիշատակ Քրիստոսի չարչարանաց:

* * * Երբ երազի մը մէջ թանկագին բան մը կ'ուտեն՝ մահ պիտի պատահի այդ յարկին մէջ. ասոր համար երբ տան անդամներէն մէկը հիւանդանոց, շատ կը վախնան եւ մեծ խնամք կ'ընծայեն անոր, սուրբերու կը վազեն և անոնց օգնութիւնը կը խնդրեն:

* * * Երբ մէկը ճամբայ քալած ատեն հաւ մը թռչի եւ կամ քար մը գլտորի ու ճամբան ընդհատէ, դժբաղդութեան մը պիտի հանդիպի այդ մարդը: Շատեր այս նշանէն վախնալով իրենց ճամբէն ետ կը դառնան:

ՎԱՀԱՆ



ՔԻՉ ՄԸ ԾԻԾԱՂ

Դաւառացի հարուստ վաճառականի մը տղան առարկելով թէ բժիշկ պիտի ըլլայ, Պոլիս կուգայ, ու գրէթէ ամէն օր հարսնիքով, երեկոյթով կ'անցընէ:

Տարի մը անցած է այսպէս: Յանկարծ օր մը Պոլիս կը վերադառնայ հայրը, ու դիպումով մէկտեղ չըջագայելու միջոցին, գեղեցիկ մեծ շէնքի մը առջեւ կանգ առած, անհոգ շէշտով մը իր տղուն կը հարցնէ այն շէնքին ինչ ըլլալը:

— Չեմ գիտեր, կ'ըսէ կարծեցեալ ուսանողը, հարցնե՛մ:

Ու անցորդի մը հարցնելէն վերջ, իր հօրը կը դառնայ:

— Բժշկական վարժարանն է:

Հայրը փատ կտրած կը նայի:

* * *

Հարսի մը ցաւելով կը խօսին իր կես-ընթաց մահուանը վրայ:

— Ինքզինքին տէ՞րն էր վերջին օրը, կը հարցնէ այցելուներէն մէկը:

— Հապա՛, կը պատասխանէ հարսը, մինչեւ վերջին վայրկեանը, նոյն իսկ դեղին սրուակը երեսիս նետեց...

* * *

Խանութի մը մէջ:

— Աղջիկ, միտքս եկաւ, սա խեղճ Մարգարն ալ մեռեր է եղեր:

Թերեւս աղքատութենէն, շատ փայլուն վիճակ մը չունէր, այնպէս չէ՞:

— Ինչ կ'ըսես, վեռնիկ կը շիներ նէ:

* * *

— Հայրիկ, ո՞ւր կ'երթայ գետին ջուրը:

— Չե՞ս գիտեր, ծովը կ'երթայ:

— Բայց եթէ ամէն գետերն ալ հոն կ'երթան, ծովը պէտք է յորդի, այնպէս չէ՞:

— Չէ՛, տղաս, կը պատասխանէ միամիտ հայրը, ծովը չի յորդիր, բայց ինծի անտնի կուգայ որ ծովին տակը սպունգներ կան որոնք աւելցած ջուրը կը ծծեն:

* * *

Պ*** ամէնէն ցրուած միտքը ունի:

Անցեալ օր կանուխ բարեկամի մը տուն կ'երթայ ու զանգակը դարնելէն քանի մը վայրկեան վերջ նոյն ինքն իր բարեկամը գիշերազգեստով դիմացը կ'ելնէ:

— Աս ի՛նչ է, կ'ըսէ Պ*** գիշերազգեստը դիտելով, սպասուհիդ փոխեր ես, հէ՛:

* * *

Պանդուկի մը մէջ:

— Բայց, օրիորդ, կ'ըսէ ճամբորդ մը պանդուկապանուհիին, այս սենեակին պատուհանները վարագոյր չունին:

— Պա՛հ, կը պատասխանէ միւսը անհոգ դէմքով մը, ապակիներն այնչափ աղօտ են որ վարագոյր հագածի պէս կ'երեւան:

* * *

Դասատու մը երկրաչափական պատկերներ կրող սեւ տախտակ մը ցուցնելով, աշակերտի մը կը հարցնէ:

— Բացատրեցէ՛ք թէ ի՛նչ է բոլորակ մը:

— Բոլորակը այն կլոր ճերմակ սեղանն է որոյ առջեւ կը տեսնեմ քեզ ճակած ատենդ ամէն իրիկուն:

* * *

— Տա՛ւը տարի կայ որ զիրար չենք տեսած... Եւ կ'անցնի՞ս երբեմն այս փողոցէն...

— Շատ անգամ:

— Եւ գրէթէ ամէն օր:

— Ուրեմն ասկէ ետքը միշտ իրարու պիտի հանդիպինք:

— Այդպէս կը կարծեմ...

Հետեւեալ օրը զուգահեռական փողոցի մը մէջ անոնք դէմ դիմաց կ'ելլան... զոր երկուքն ալ անջատաբար ընտրած էին իրարու չհանդիպելու համար:

* * *

Պզտիկ Թադոս — վեց տարու — սափրիչին խանութը երթալով բազկաթոռին վրայ կը տոտոզուի:

Սափրիչը. — Պզտիկ բարեկամս, ի՞նչ ձեռով կտրեմ մազերդ:

Թադոս (Առանց վարանելու). — Հայրիկին պէս... մէջտեղը խոշոր սլարապ մը ձգէ:

Արժանեք. — ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ԳՐՊԱՆԻ ԲԱՌԳՐԻՅՈՅԿ

ՖՐԱՆՍԱՀԱՅ


Գին 5 Ղրուս

800 փոքրագիր երեսներէ բաղկացած սիրուն գրքոյկ մը, որ 13—14,000 բառերու ու ոճերու եւ ընթացեալ ասացուածներու հաւաքոյթ մ'է եւ Ֆրանսերէն ուսանողներու անբաժան ընկերք: Գնեցե՛ք մէկ մէկ օրինակ եւ ձեր զաւկին ձեռքը տուէ՛ք, վստահ ըլլալով որ այդ գրքոյկ պիտի սրէ անոր ուսման փափաքը: 10 օրինակ մէկէն առնողին 30 առ 100 գեղջ: Դիմեցե՛ք միայն Հանրագիտակի սնօրէնութեան:

ՆԻՈՒ ՀՈՄ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԻԱԿ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆ

Ուսարուքի՛ն գործարանի մարտիկն



Որ կը մեցի բոլոր կարի մեքաններուն հետ

Իր պարզութեամբ

Տոկունութեամբ

Արագութեամբ

Թեթեւութեամբ

Աժանութեամբ

Թուրքիոյ միակ ներկայացուցիչ
ՅՈՎՀ. Կ. ՄԻԱՆՆԱՆ

Կեդրոնացեղի. — Սիրքէճի, Բէօքրէ-լի խան, Թիւ 3.

Մասնանիւղ. — Ղալաթիա, Պէօլիւք Միլ-լէթ խան, Թիւ 33.

Գնողներու համար վճարման ամէն տեսակ դիւրութիւններ:

ԱՌԵԻՂԱԿԱՆ ՄԵԾ ՏՈՒՆ ԹԷՅԻ



Կ. ԵՆՎՐՈՒԵԱՆ

Վ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՄԵՇՈՒՐԱԿ ՃՈՒ ՄԹԵՐԲ

գերընտիր եւ ամէն ճաշակի յարմար

ձրոշ եւ չափաւոր գին

Պահնէ գաբու, ձէլալ պէյ խանի տակ

Թէ՛ Պոլսոյ եւ Թէ՛ գաւառի մեր պատուարժան ընթերցողներուն կը յանձնարարենք սոյն վստահելի վաճառատունն, որ երկար տարիներէ ի վեր պատուաւոր դիրք մը գրաւած է, եւ ամէն տարի չի զլանար իր Թէյի նուէրը՝ ի նպաստ կարօտեւոց:

Վստահաբար դիմեցէ՛ք եւ պիտի չգըղջաք: — Վաճառատան մարգային ուշ դրէ՛ք:

ԿԱՌՆԻՈՐ Ա.ՁԴ. — Հանրագիտակի կողքին երեք էջերը ծանուցմանց յատկացուած են: Անոնք որ կը հաճին մէկ տարեկան բաժանորդագրուիլ, կրնան իրենց ծանուցումները ՁՐԻ հրատարակել տալ, 10 ական տող, 5 անգամուան համար. իսկ 50 տող մէկ անգամուան համար:

Բաժանորդագրութիւնք կ'ընդունուին, եռամսեայ, վեցամսեայ եւ տարեկան:

ԻՍԹԸՐՆԳԱՌԻՆԹԻՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ընդդեմ հրդեհի ի «ՀԸԼԼ»

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Ֆր. 7,250,000

ԱԼԼԷԱՆՁՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կենաց եւ արկածից ի «ՃԵՆՈՎԱ»

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Ֆր. 87,455,645

Ընկերութեանց Դրամաւսուցն է «Քրէտի Լիօնէ»,

ՌԷՆԱՆ—ՎԵՍՏՐԱԼԻԷՆ

ՇՈՎԱՑԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ի Կլաւապոլս

Դրամագլուխ եւ Պահեստ Ֆր. 6,250,000

ԳՐԱՍԵՆՆԱԿ — Ստամպուլ, Հաճօրուլո թան, թիւ 53, 54, 55, 56

Լիպօր Ներկայացուցիչ

Գ. ՅԵՐԱՏԵԱՆ



ՌՕՍԻԱ — ROSSIA



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՅՔ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1898 յարւոյ մէջ գանձուած ապահովագին

34,775,642 ֆրանք

Երաշխաւորութեան գումար

121,765,333 »

1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած

164,172,000 »

Կեդրոնացեղի, Քարափին վրայ, Մախասան հին սեղր

Ընդհ. Գննիչ
Ա. ՀԻՐԻՄԻՉ

Ընդհ. Դորձակալ
ԹԷՈՏՏՈՐ ՌԷՐԷՆ

ՄԵՐ ՀԱՍՏԷՆ

Հանրագիտակի վերաբերեալ ամէն գրու թիւն պէտք է ուղղել Նշան Պէրպէրեան
սպարանք, Էսփի զապթիյէ հասէսի թիւ 61, առ Տնօրէնութիւն
եւ Խմբագրութիւն «Հանրագիտակի»